ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԱՍՈՎ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍՈՎ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/2690/02/25 ք. Երևան
21 Մարտի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի «Էմհար» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ–ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ պայմանագրի միակողմանի լուծումը, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և մատակարարված ապրանքն ընդունել պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝ խնդրելով անվավեր ճանաչել՝

1. 03.03.2025 թվականին «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրեն Մ. Ադամյանի կողմից թիվ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/89-1 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծելը,
2. 13.03.2025 թվականին «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի

տնօրեն Մ. Ադամյանի կողմից կայացած որոշումը՝ «Էմհար» ՍՊԸ-ին գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով ներառելու վերաբերյալ:

3. Պարտավորեցնել «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին ընդունել 14.11.2024թ.-ին կնքված թիվ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/89-1 պայմանագրով «Էմհար» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները, այն է՝ թոքերի արհեստական շնչառության սարքավորում /NORTHERN MEDITEC LIMITED CRIUS V6, քանակը՝ 2 լրակազմ/:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 18.03.2025 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/2690/02/25 քաղաքացիական գործն, որը **մակագրվել** և **հասանելի է** դարձել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **18.03.2025 թվականին**:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ հայցադիմումի ընդունումը՝ ***14.11.2024թ.-ին կնքված թիվ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/89-1 պայմանագրով «Էմհար» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները, այն է՝ թոքերի արհեստական շնչառության սարքավորում /NORTHERN MEDITEC LIMITED CRIUS V6, քանակը՝ 2 լրակազմ/ «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին ընդունել պարտավորեցնելու պահանջի մասով*** ենթակա է մերժման, իսկ ***03.03.2025 թվականին «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրեն Մ. Ադամյանի կողմից թիվ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/89-1 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծելը և 13.03.2025 թվականին «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրեն Մ. Ադամյանի կողմից կայացած որոշումը՝ «Էմհար» ՍՊԸ-ին գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեղող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով ներառելու վերաբերյալ որոշում անվավեր ճանաչելու պահանջների մասով*** հայցադիմումը պետք է ընդունել վարույթ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վարույթ է ընդունում ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ **գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5–րդ հոդվածի համաձայն՝

1. Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» **Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը**:

2. Գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները:

(...)

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Դատարանն արձանագրում է, որ Դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ **պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների** բողոքարկման հետ կապված վեճերը, բացի այդ յուրաքանչյուր շահագրգիռ անձ **իրավունք ունի** բողոքարկելու **պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները՝** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Բացի այդ, գնումների մասին ՀՀ օրենսդրության տեսանկյունից նախատեսված է նաև **գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները** բողոքարկելու հնարավորություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման

պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **<u>գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները</u>**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **<u>անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց</u>**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և **<u>ներկայացվում են Համակարգի միջոցով</u>**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, **<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և **<u>Համակարգով ուղարկելու միջոցով</u>**:

Տվյալ դեպքում Հայցվորի ներկայացուցիչը ներկայացված հայցադիմումով, ի թիվս այլնի, խնդրել է ***<u>պարտավորեցնել «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին ընդունել 14.11.2024թ.-ին կնքված թիվ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/89-1 պայմանագրով «Էմհար» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները, այն է՝ թոքերի արհեստական շնչառության սարքավորում /NORTHERN MEDITEC LIMITED CRIUS V6, քանակը՝ 2 լրակազմ/</u>***, մինչդեռ սույն գործով հայցադիմումը ներկայացվել է հատուկ՝ գնումների հետ կապված վեճերով վարույթի շրջանակներում, հետևաբար տվյալ վարույթի շրջանակներում կարող են բողոքարկվել **<u>պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները, ինչպես նաև գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները,</u>** հետևաբար նման պայմաններում Դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված հայցադիմումը՝ ***<u>14.11.2024թ.-ին կնքված թիվ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/89-1 պայմանագրով «Էմհար» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները, այն է՝ թոքերի արհեստական շնչառության սարքավորում /NORTHERN MEDITEC LIMITED CRIUS V6,</u>***

<u>քանակը՝ 2 լրակազմ/ «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին ընդունել պարտավորեցնելու պահանջի մասով,</u> ենթակա չէ քաղաքացիական դատավարության հատուկ՝ գնումների հետ կապված վեճերով վարույթի կարգով քննության, ուստի պետք է հայցադիմումի ընդունումն **<u>այդ մասով</u>** մերժել:

Ինչ վերաբերում է հայցադիմումին՝ ***<u>03.03.2025 թվականին «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրեն Մ. Ադամյանի կողմից թիվ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/89-1 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծելը և 13.03.2025 թվականին «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրեն Մ. Ադամյանի կողմից կայացած որոշումը՝ «Էմհար» ՍՊԸ-ին գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով ներառելու վերաբերյալ որոշում անվավեր ճանաչելու պահանջների մասով</u>***, ապա Դատարանը գտնում է, որ **<u>այդ մասով</u>** հայցադիմումը պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված հիմքերը:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ պատասխանող «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ–ից պետք է պահանջել «ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/89-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **<u>էլեկտրոնային համակարգի միջոցով</u>** (**<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 125-րդ հոդվածի 1-ին մասով, 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 199-րդ, 200-րդ, 234.6-րդ, 361-րդ, 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Էմհար» ՍՊԸ-ի ընդդեմ «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ–ի՝ **<u>մատակարարված ապրանքն ընդունել պարտավորեցնելու պահանջի մասին,</u>** հայցադիմումի ընդունումը մերժել:

2. «Էմհար» ՍՊԸ-ի ընդդեմ «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ–ի՝ պայմանագրի միակողմանի լուծումը, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

3. «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ–ից պահանջել դատարան ներկայացնել «ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/89-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **<u>էլեկտրոնային համակարգի միջոցով</u>** (**<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

4. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ–ի կողմից պետք է կատարվի սույն

որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

Որոշումը՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասով, օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Որոշումը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասով, օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2025.03.21 17:38:01 AMT **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am